ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի նոյեմբերի 04-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-27/01

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-27/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 02.11.2026թ. ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 04.11.2026թ. տրամադրված պարզաբանումները՝

ՀԱՐՑՈՒՄ 1. Հարգելի գնահատող հանձնաժողով՝ ուսումնասիրելով հրավերի տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալը՝ Ջրատար մեքենան ունենան OTTC հավաստագրեր:Վերը նշված պահանջը հնարավորություն է տալիս մասնակցելով առաջարկել բացառապես ՌԴ արտադրության մեքենաներ, այնինչ շուկայում առկա են նույն տեխնիկական բնութագրին համարժեք այլ ավելի որակյալ մեքենանե, իսկ OTTC հավաստագրերը ընդհանրապես ավելի որակյալ չի դարձնում ձեռքբերվելիք մեքենան, այլ ուղղակի սահմանափակում մրցակցությունը: Առաջարկում ենք հրավերում կատարել փոփոխություններ, այն է՝ հրավերից հանել OTTC հավաստագիր ունենալու պահանջը՝ մրցակցությունը ապահովելու համար:
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 1. Հարգելի գործընկեր, Շուկայում OTTC հավաստագիր ունեցող հատուկ տեխնիկա առկա է ինչպես ՌԴ այնպես ել Չինաստանի, Բելառուսի և Եվրոպական մի շարք երկրների արտադրող գործարաններից և այն պնդումը, որ <<Վերը նշված պահանջը հնարավորություն է տալիս մասնակցելով առաջարկել բացառապես ՌԴ արտադրության մեքենաներ>> չի համապատասխանում իրականությանը: OTTC հավաստագիր ունենալու պահանջը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին և երաշխավորում է նշված տեխնիկայի լիովին համապատասխանությունը՝ արտադրող գործարանի կողմից հայտարարված տեխնիկական բնութագրին և տեխնիկական անվտանգության կանոններին, այնինչ դրա բացակայությունը հնարավորություն է տալիս մի շարք արտադրողների հայտարարել տեխնիկական բնութագրեր, որոնք միայն թղթի վրա են համապատասխանում, իսկ փաստացի էականորեն տարբերվում են: Ուստի OTTC հավաստագրերի առկայությունը ավտոմեքենայի բազային շասիի և վրակառույց սարքավորման մասով համարում ենք պարտադիր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-27/01 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն. Ավագյանին:

Հեռախոս՝ 011 514 745:

Էլեկոտրանային փոստ՝ gnumner.kanach@yerevan.am

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№ 2 от 04.11.2026 года и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры " KSHMP-EAAPDzB-27/01 "

Оценочная комиссия процедуры закупки под кодом "**KSHMP-EAAPDzB-27/01** ", организованной с целью приобретения товаров для нужд ОНКО “Озеленение и охрана окружающей среды”, ниже представляет запрос, полученный 02.11.2026г. и предоставленный 04.11.2026г. по нему разъяснение относительно приглашения по тому же коду:

Запрос 1. Уважаемая оценочная комиссия, после изучения технических условий приглашения было установлено следующее: водовоз должен иметь сертификаты ОТТС. Это требование позволяет участникам предлагать исключительно автомобили российского производства, в то время как на рынке существуют другие, более качественные автомобили с теми же техническими характеристиками, и сертификаты ОТТС нисколько не повышают качество приобретаемого автомобиля, а лишь ограничивают конкуренцию. Мы предлагаем внести изменения в приглашение, а именно, исключить требование о наличии сертификата ОТТС из приглашения, чтобы обеспечить конкуренцию.

Разъяснение 1. Уважаемый партнер, Спецтехника с сертификатом ОТТС доступна на рынке от производителей из России, Китая, Беларуси и ряда европейских стран, и утверждение о том, что «указанное требование позволяет участвовать в предложении исключительно российских автомобилей», не соответствует действительности.Требование о наличии сертификата ОТТС соответствует требованиям Технического регламента Таможенного союза «О безопасности колесных транспортных средств» (ТС 018/2011), утвержденного Решением Комиссии Таможенного союза от 9 декабря 2011 г. № 877, на который ссылается Постановление Правительства Республики Армения № 71-Н от 30 января 2015 г., и гарантирует полное соответствие указанной техники техническим характеристикам и правилам технической безопасности, заявленным производителем, в то время как ее отсутствие позволяет ряду производителей заявлять технические характеристики, которые соответствуют только на бумаге, но фактически существенно отличаются. Поэтому мы считаем наличие сертификатов ОТТС для базового шасси и надстройки транспортного средства обязательным..

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии Н. Авагян под кодом " **KSHMP-EAAPDzB-27/01** ".

Телефон: 011 514 745:

Электронная почта: gnumner.kanach@yerevan.am